




Funded by the European Union

# ԿԱՆԱԶ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<https://unccelearn.org/course/view.php?id=125&page=overview>

## Թիրախային լսարան

- Նախարարությունների, գերատեսչությունների և տեղական ինքնակառավարման մարմինների պետական ծառայողներ
- Մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների բնապահպանական ոլորտի ղեկավարներ
- Ֆակուլտետներ, հետազոտողներ և ուսանողներ
- Հետաքրքրված քաղաքացիներ



## Ուսուցման նպատակները

- Նկարագրել ներառական կանաչ տնտեսության իրագործման հիմքում ընկած գաղափարը և հիմնական հասկացությունները և տարբերությունը ավանդական գործելաոճերի համեմատ
- Բացահայտել ազգային տնտեսությունների կանաչ անցման հնարավորությունները
- Բնութագրել առանցքային ոլորտների հիմնական հնարավորություններն ու մարտահրավերները
- Ներկայացնել ազգային ռազմավարության և ներառական կանաչ տնտեսության առաջխաղացման պլանավորման օրինակներ
- Տարբերակել ներառական կանաչ տնտեսությանն աջակցող միջազգային շրջանակներն ու նախաձեռնությունները



## Մեթոդաբանություն և ձևաչափ

Դասընթացը կազմակերպված է ինքնավար կերպով և առանց դասընթացի մոդերատորի: Այն բաժանված է հինգ մոդուլի, որոնք կօգնեն հասնել ուսուցման նպատակներին: Մոդուլներն առանձին են: Դասընթացի ողջ ընթացքում մասնակիցներին կառաջարկվեն հղումներ և հրապարակումներ ներառական կանաչ տնտեսության վերաբերյալ, եթե ցանկություն կա ավելի խորը ուսումնասիրելու տվյալ թեման: Յուրաքանչյուր մոդուլում ներկայացված է ինտերակտիվ դաս, տեսանյութ և հարցաշար: Մոտավորապես 10 ժամ ուսումնասիրություն:



## Սերտիֆիկացում

Ավարտական սերտիֆիկատ ստանալու համար պետք է անցնել բոլոր հինգ մոդուլները և հաջող արդյունքներով ավարտել բոլոր համապատասխան հարցաշարերը



### Մոդուլ 1. Ներկա իրավիճակի մասին պատկերացում. ներառական կանաչ տնտեսությունը զարգացնելու գաղափարական հիմքը

- Տնտեսության շրջադարձ
- Կանաչ անցում կատարելու հիմնավորումը
- 2030 օրակարգը և ներառական կանաչ տնտեսությունները

### Մոդուլ 3. Դեպի ուր ենք գնում. Բարձր «կանաչ» ներուժ ունեցող առանցքային ոլորտներ

- Կայուն զարգացման ազգային համատեքստ
- Ներդրումներ բնական կապիտալում
- Ներառական կանաչ տնտեսության նախաձեռնություններ աշխարհի տարբեր երկրներում

### Մոդուլ 5. Նպաստավոր միջավայր. ներառական կանաչ տնտեսություններին աջակցող միջազգային շրջանակներ և նախաձեռնություններ

- Կանաչ անցման ուղեցույց հանդիսացող միջազգային շրջանակներ
- Զարգացման ֆինանսավորում ներառական կանաչ տնտեսության համար
- Ներառական կանաչ տնտեսության նախաձեռնություններ աշխարհի տարբեր երկրներում

### Մոդուլ 2. Գործիքակազմի դիտարկում. Կառուցվածքային փոփոխությունների համար պայմանների ստեղծումը

- Ավելի խելացի պետական ֆինանսավորման խթանում
- Հզոր կանոնակարգային շրջանակների ձևավորում
- Միջազգային կարգավորող մեխանիզմներ
- Մասնավոր ֆինանսական ռեսուրսների հավաքագրում
- Փոփոխության մասնակիցների համար նպաստավոր պայմանների ստեղծում կարողությունների զարգացման միջոցով

### Մոդուլ 4. Ուղու ձևավորում. Կանաչ տնտեսության քաղաքականության նպատակների իրագործման ռազմավարություն և պլանավորում

- Շահագրգիռ կողմերի ներգրավումը կանաչ անցման գործընթացում
- Էկոլոգիական նկատառումների ինտեգրումը զարգացման պլանավորման գործընթացում

Action implemented by:



Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Էլեկտրոնային դասընթացի նյութերը մշակվել են «Գործընկերություն հանուն կանաչ տնտեսության» ծրագրի շրջանակներում: Թերթիկում արտահայտված կարծիքները որևէ կերպ չեն կարող արտահայտել Եվրոպական միության, նրա անդամների կամ Արևելյան գործընկերության երկրների կառավարությունների պաշտոնական տեսակետները: